Պարույր Սևակ

Սերը

1.

Նա գալիս է մի՛շտ էլ ճամփաներով անհա՛յտ չքարտեզագրված,
Ինչպես ջուրն անձրևի կամ հալոցքի:
-Սերն է:
Հոլանդացիք ծովի՛ց, ամենազո՛ր ծովից
Հող են հափշտակում,
Խլում պատա՛ռ-պատա՛ռ, նշխա՛ր-նշխա՛ր:
-Սերն է:
Երբ վիթխարի նավը մոտենում է դանդաղ
Նավարկելի գետի ցածրը կամուրջներին,
Սրանք թևերն իրենց վե՛ր են տնկում,
Իսկույն անձնատուր են լինում կարծես:
-Սերն է…

2.

Հետըդ զրուցողին պատասխան ես տալիս՝
Խելոք, կարգին-սարքին մեքենայի նման,
Մինչդեռ մտքով, անվե՛րջ, նրա՛ հետ ես խոսում,
Ով հեռու է քեզնից,
Լոկ անունն է քեզ մոտ,
Իբրև մի անձնագիր, որ... չի կնքված:
-Սերն է:

Քներակիդ զարկը կաթոցքի է նման,
Ա՛յն կաթոցքի, որ (ճի՜շտ) քար է ծակում:
Անքնությունն անվերջ հյուսում է ցանց մի խիտ,
Որով ձո՛ւկ չեն որսում,
Խեղդում են մա՜րդ:
-Սերն է:
Քնքշացել ես այնքա՜ն
Ու խոցելի՛ դարձել,
Կարծես թե ապրում ես առանց մաշկի:
-Սերն է:
Երկու աչքեր, անվե՜րջ, հետապնդում են քեզ,
Երկու աչքեր, ասես մի զույգ դրոշմ,
Իրենց անջնջելի տիպն են դնում
Կյանքի՛դ, խմած ջրի՛դ, ողջ աշխարհի՛
Եվ մինչևիսկ արյան գնդիկների՛դ վրա,-
Երկու աչքեր՝
Դրո՛շմ,
Կնի՛ք,
Խարա՜ն...
-Սերն է...

10.III.1964թ.
Դիլիջան